20 Բայց զինն ժամու[1] աւուրն երրորդի յարուցեալ երանելի Խուժիկն, որպէս թէ կամաւ կաղս ի կաղս, հայելով զկանի իւր՝ փախչէր ի տեղւոջէն, զի զնոսա զաւրացուսցէ ի կանգնել եւ զկնի իւր հեռացուցանել ի վայրացն: *21* Որոց տեսեալ զերանելի Խուժիկն, զի երթայր խեկբեկս յընթացի՝ ուշաբերեալք առ վտանգի զկնի նորա սրանային ի տեղւոյն, չիշխեցեալք բնաւ դառնալ եւ հայել ի տեղիսն առ երկիւղի. եւ պնդեալք զհետ Վեհդենշապհոյ եւ գործակցացն նորա փութային: *22* Բայց երանելի Խուժիկն ընդ այլ ճանապարհ որոշէր ի նոցանէն: *23* Եւ հասեալ պահապանացն առ իշխանսն յաւուրն վեցերորդի՝ պատմէին զամենայն անցս աղէտիցն, որ անցին ընդ նոսա զտիւն մի եւ զգիշերս երկուս. զորոց զգոյն երեսացն տեսեալ Դենշապհոյ եւ ընկերացն նորա, եւ զանցս ահագին իրացն մի ըստ միոջէ լուեալ՝ զարհուրէին, եւ ապշեալք ի բազում ժամս հիանային: *24* Խորհուրդ ի մէջ առեալ՝ ոչ ինչ կարէին իմանալ հնարս, բայց զպահապանսն եւեթ լռեցուցանել ջանային, չյայտնել ումեք ամենեւին եւ ոչ բնաւ յիշել առ ումեք[2] զմահ քահանայիցն եւ կամ զայնպիսի նշանաց երեւմունս: *25* Բայց ինքեանք[3] միայն խոճոճելով առանձինն զարմացմամբ որպէս յանզգայութիւն ընկղմէին, ասելով Դենշապուհ եւ Ջնիկայ ցմիմեանս, եթէ «Ոչ են իրք քրիստոնէից թեթեւ իմն եւ դուզնաքեայ. այլ հաստատ մեծ է զաւրութիւն աւրինաց նոցա եւ հաւատոց. եւ մեք յանգիտութեան վնասեալ կորնչիմք եւ չզգամք»:

26 Իսկ երանելի Խուժիկն գիտացեալ, թէ ցածոյց Աստուած զամենայն կասկած յամենայն կողմանց, այլ եւ զպատասխանիսն իշխանացն լուաւ, զոր ինչ պահապանացն արարին, եւ թէ ոչ ոք առնէ փոյթ ոսկերացն սրբոց՝ առեալ ընդ իւր տասն եւս այլ ընկեր, զորոց կարի քաջ գիտէր զհաւատս[4] քրիստոնէութեանն՝ առնուին ընդ ինքեանս եւ գրաստս, եւ ըստ իւրաքանչիւր անձին սրբոցն սապատս չորեքկուսիս, եւ գնացին լռելեայն[5] ի գիշերի յիրսն: *27* Եւ մերձեալք ի վայրն՝ վրիպէին ի տեղւոյն, ուր մարմինք սրբոցն կային, քանզի ոյժ աղջամղջին էր գիշերն. եւ աշխատեալք առ վայր մի՝ տրտմէին, անարժանս կարծեցեալ զանձինս գիւտի երկնաւոր գանձուն: *28* Եւ մինչդեռ նոքա խռովեալք յածէին ընդ տեղիսն՝ եւ ահա յանկարծակի ի նմանութիւն լուսաւոր արծուոյ սլացեալ հասանէր յերկնից եւ իջեալ նստէր ի վերայ մարմնոյ սրբոյ առն Աստուծոյ Ղեւոնդի. եւ լուսաւորեալ տեղիքն առաւել եւս քան ի տուէ՝ երեւէին յայտնապէս մարմինք իւրաքանչիւրոց[6]

1 *Ձ.* զինն ժամաւ
2 *ՏՏ.* յիշել ումեք
3 *Ձ.* երեւումնս. բայց ինքեան
4 *Ձ.* զհաւատ
5 *Ատ. այստեղ եւ յետոյ՝* լռելեան
6 *ՏՏ.* իւրաքանչիւր